Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել 27-29 հունիսի, 2023 թվական

4. Հրավիրող կողմը

Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարության գլխավոր տնօրենություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն «Հետազոտությունների և նորարարության ոլորտներում միջազգային համագործակցության արժեքների և սկզբունքների մասին բազմակողմ երկխոսություն» խորագրով երկրորդ բարձրաստիճան հանդիպմանը

6. Քննարկված թեմաները

1. Բազմակողմ երկխոսության հարթակի նպատակները և խնդիրները,
2. Միջազգային համագործակցության սկզբունքները, արժեքները և շրջանակը.
   - Ակադեմիական ազատություն,
   - Հետազոտությունների էթիկա և արժանահավատություն,
   - Գենդերային հավասարություն և ներառականություն,
   - Բաց գիտություն,
   - Հետազոտությունների գերազանցություն,
3. Միջազգային համագործակցության մարտահրավերները և դրանց լուծման ուղիները,
4. 2024 թվականի նախարարական հանդիպման օրակարգի ձևավորումը

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Քննարկվել են Հետազոտությունների և նորարարության ոլորտներում միջազգային համագործակցության արժեքների և սկզբունքների մասին բազմակողմ

երկխոսության հարթակի նպատակները և խնդիրները, վերջին ութ ամիսների ընթացքում կազմակերպված աշխատաժողովների արդյունքները, հարթակի գործունեության արդյունավետության բարձրացման եղանակները, ինչպես նաև ներկայացվել են միջազգային համագործակցության համար արդիական սկզբունքներն ու արժեքները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել 2024 թվականի նախարարական հանդիպման օրակարգում ներառվելիք հարցերը ամփոփելու և վերջիններս աշխատանքային կարգով շրջանառելու վերաբերյալ:

Որոշվել է նաև ուսումնասիրել այլ հարթակներում օրակարգային հարցերի վերաբերյալ քննարկումներին մասնակցության հնարավորությունը և ապահովել համագործակցության համաչափությունն ու համադրելիությունը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Քննարկումների ընթացքում նշվել է, որ մասնակից երկրները տարբերվում են գիտական քաղաքականության հարցերում իրենց մոտեցումներով, ինչպես նաև յուրաքանչյուր երկրի տնտեսության առանձնահատկություններով պայմանավորված խնդիրների բնույթով և բովանդակությամբ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ աշխատանքային խումբը կմշակի օրակարգի այնպիսի կետեր, որոնք ընդհանրական կլինեն բոլոր մասնակից երկրների համար:

Օրակարգային հարցերի վերաբերյալ մասնակիցները ներկայացրել են իրենց դիտարկումները, որոշվել է շարունակել շփումները հարթակի ընձեռած հնարավորությունների շրջանակում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Սարգիս Հայոցյան

03.07.2023 թ.

Հավելված 3
ՀՀ վարչապետի 2018 թ. սեպտեմբերի 19-ի
N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. **Մարմնի անվանումը՝** ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե

2. **Գործուղման մասին իրավական ակտի համարը՝** ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հունիսի 21-ի N 696-Ա հրաման

3. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)**

ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյան

4. **Գործուղման վայրը՝** ք. Բրյուսել (Բելգիայի Թագավորություն)

5. **Գործուղման ժամկետները՝** 2023 թվականի հունիսի 27-29

6. **Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝**

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

ճանապարհածախս, 1 օրվա գիշերավարձ

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սարգիս Հայոցյան	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	հրավիրող կողմի միջոցների հաշվին	
	Ավիատոմսի Արժեքը(դրամ)		
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (եվրո)	158.91	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	67 237	
	Օրերի քանակը	1	
	Ընդամենը (դրամ)	**67 237**	**67 237**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (եվրո)	115	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	48 658.8	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	**145 976**	**145 976**
Այլ ծախսեր	Հակահամաճա-րակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (նկարագրել)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**213 213**	**213 213**

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը՝

03 հուլիսի 2023թ.